

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2009 թվապահի ԱՊՐԻԼԻ 22-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵ-  
ՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱ-  
ՎԱՌՆԵՐՈՒՄ 2009-2012 թվապահներին ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ  
ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

8 հուլիսի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ.Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի  
(զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100  
հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի  
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի ապրիլի  
22-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության  
և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև կրթության և գիտության  
բնագավառներում 2009-2012 թվականների համագործակցության ծրագրում ամրա-  
գրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրու-  
թյանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի  
դիմումը սահմանադրական դատարան՝ մուտքագրված 30.06.2009թ.:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով ծրագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև կրթության և գիտության բնագավառներում 2009-2012 թվականների համագործակցության ծրագիրն ստորագրվել է 2009 թվականի ապրիլի 22-ին Երևանում՝ երկու երկրների միջև կրթության և գիտության բնագավառներում համագործակցությունը զարգացնելու և խորացնելու նպատակով:

2. Ծրագրով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- ապահովել կրթական համակարգերի կառուցվածքի, բովանդակության և կազմակերպման, ինչպես նաև կրթական և գիտական հաստատությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության փոխանակում.

- տարեկան տրամադրել.

- բակալավրի կամ մագիստրոսի կրթական աստիճան ստանալու համար 4 կրթաթոշակ՝ ուսումնառության լրիվ ժամկետով,

- ոչ պակաս, քան 1 ամիս և առավելագույնը մինչև 12 ամիս ժամկետով կրթաթոշակ՝ մասնագիտացումը խորացնող և գիտական հետազոտություններ կատարող ասպիրանտների, դոկտորանտների և դասախոսների համար.

- կրթական ծրագրին մասնակցող անձանց ապահովել.

- կրթաթոշակով,

- անվճար կրթությամբ,

- կրթական ծրագրով՝ համաձայն ազգային օրենսդրության,

- ուսանողական հանրակացարանով՝ գործող ազգային օրենսդրությանը համապատասխան,

- անվճար բժշկական ծառայություններով՝ ազգային օրենսդրության համաձայն,

- գրադարաններից, արխիվներից, փորձասենյակներից և այլն օգտվելու թույլտվությամբ.

- համալսարանների միջև դասախոսների փոխանակման դեպքում ապահովել.

- ամենամսյա աշխատավարձով՝ գործող ազգային օրենսդրությանը համապատասխան,

- կահավորված կացարանով,

- անվճար բժշկական ծառայություններով՝ ազգային օրենսդրության համաձայն.

- խրախուսել Հայաստանի կրթական և գիտական ամսագրերում հոդվածների և համատեղ ուսումնասիրությունների և հետազոտությունների հրատարակումը, ինչպես նաև համատեղ գիտաժողովների անցկացումը և այլն:

3. Ծրագրի հայերեն, բուլղարերեն, անգլերեն տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման ընթացքում տարաձայնություն առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն տեքստը: Ծրագրում կատարվող փոփոխություններն ու լրացումները կձևակերպվեն ծրագրի անբաժանելի մաս հանդիսացող առանձին արձանագրություններով, որոնք ուժի մեջ կմտնեն ծրագիրն ուժի մեջ մտնելու համար նախատեսված կարգով՝ անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի պահպանմամբ:

4. Ծրագրում ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9 հոդվածին և բխում են միջազգային փոխշահավետ համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2009 թվականի ապրիլի 22-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև կրթության և գիտության բնագավառներում 2009-2012 թվականների համագործակցության ծրագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

8 հուլիսի 2009 թվականի  
ՄԴՈ-814